040.1631.041204

"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

"4" դեկտեմբերի 2004 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

11 նոյեմբերի 2004 թվականի N 1631-Ն

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(1-ին մաս)

Հիմք ընդունելով "Ստանդարտացման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի դրույթները, ինչպես նաեւ հաշվի առնելով անհատական պաշտպանության միջոցների բազմազանությունը եւ դրանց՝ մարդկանց անվտանգության ապահովման ունակության աստիճանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել անհատական պաշտպանության միջոցների տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետով հաստատված տեխնիկական կանոնակարգի 11-րդ կետի "ը" ենթակետի եւ 12-րդ կետի "ժբ" ենթակետի անհատական պաշտպանության միջոցների հայերենով մակնշմանը ներկայացվող պահանջների, որոնք ուժի մեջ են մտնում սույն որոշման հրապարակման օրվանից երկու տարի հետո:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ԻՆ

Հավելված
ՀՀ կառավարության
2004 թվականի նոյեմբերի 11-ի
N 1631-Ն որոշման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն անհատական պաշտպանության միջոցների տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) գործողությունը տարածվում է հետեւյալ անհատական պաշտպանության միջոցների վրա՝

ա) պաշտպանական հագուստ,
բ) ոտքերի պաշտպանության միջոցներ,
գ) ձեռքերի պաշտպանության միջոցներ,
դ) աչքերի պաշտպանության միջոցներ,

ե) լողական օրգանների պաշտպանության միջոցներ,
զ) գլխի եւ դեմքի պաշտպանության միջոցներ,
է) շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ,
ը) բարձրությունից ընկնելուց պաշտպանվելու միջոցներ,
թ) ջրում օգտագործման համար նախատեսված եւ խորտակվելուց պաշտպանվելու միջոցներ:

2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են դրա 1-ին կետում նշված անհատական պաշտպանության միջոցներին ներկայացվող անվտանգության պահանջները:

3. Սույն տեխնիկական կանոնակարգը չի տարածվում այն անհատական պաշտպանության միջոցների վրա, որոնք նախատեսված են՝
ա) զինված ուժերի եւ իրավապահ մարմինների համար.
բ) հարձակումից ինքնապաշտպանության համար (աէրոզոլային սարքեր, ձեռքի վախեցնող զենք).
գ) անհատական օգտագործման համար եւ պաշտպանում են՝
անբարենպաստ մթնոլորտային պայմաններից,
խոնավությունից եւ ջրից,
բարձր ջերմաստիճանից.
դ) օդանավերի կամ նավերի վրա գտնվող անձանց պաշտպանելու կամ փրկելու համար, որոնք մշտապես չեն օգտագործվում:

## II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Սույն տեխնիկական կանոնակարգի համաձայն անհատական պաշտպանության միջոց է համարվում ցանկացած սարքը կամ հարմարանքը եւ (կամ) մի քանի սարքերից կամ հարմարանքներից բաղկացած միավորը, որը նախատեսված է մեկ կամ մի քանի վնասակար եւ վտանգավոր գործոններից՝ հնարավոր վտանգներից մարդու եւ (կամ) մարդու մարմնի կամ նրա առանձին մասերի պաշտպանության համար:

5. Արտաքին սարքին լրացուցիչ միացնելու ցանկացած պարագա, որը շուկա է հանվում անհատական պաշտպանության միջոցի հետ միասին, պետք է համարվի դրա անբաժանելի մասը, եթե անգամ այդ պարագան նախատեսված չէ վտանգի ամբողջ ընթացքում օգտագործողի կողմից մշտապես կրելու կամ բռնելու համար:

## III. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

### Անհատական պաշտպանության միջոցներին ներկայացվող պահանջները

6. Անհատական պաշտպանության միջոցները պետք է կիրառվեն այն դեպքերում, երբ աշխատանքի անվտանգությունը հնարավոր չէ ապահովել սարքավորման կառուցվածքով, արտադրական գործընթացների կազմակերպմամբ, ճարտարապետահատակագծային լուծումներով եւ կոլեկտիվ պաշտպանության միջոցներով:

7. Անհատական պաշտպանության միջոցները չպետք է փոխեն իրենց հատկությունները լվացման, քիմիական մաքրման եւ վարակազերծման ժամանակ:

8. Անհատական պաշտպանության միջոցները պետք է գնահատվեն ըստ իրենց պաշտպանական, ֆիզիոլոգիական-հիգիենիկ եւ շահագործման ցուցանիշների:

9. Անհատական պաշտպանության միջոցները պետք է ունենան շահագործման հրահանգ՝ արտադրատեսակի նշանակության, ծառայության ժամկետի, շահագործման եւ պահման կանոնների նշումով:

10. Անհատական պաշտպանության միջոցները պետք է ապահովեն համապատասխան պաշտպանություն հետեւյալ հնարավոր վտանգներից՝
ա) ըստ կառուցվածքային սկզբունքների՝

էրգոնոմիկական պահանջներն ապահովելու համար անհատական պաշտպանության միջոցները պետք է մշակվեն եւ պատրաստվեն այնպես, որպեսզի օգտագործողը դրանց շահագործման մասին հրահանգներով նախատեսված համապատասխան պայմաններում կարողանա կատարել վտանգի հետ կապված աշխատանքը եւ դրա հետ մեկտեղ՝ հնարավոր վտանգի առաջացման ժամանակ ունենա պաշտպանության առավելագույն աստիճան:

Կախված կառուցվածքից՝ անհատական պաշտպանության միջոցների պաշտպանության առավելագույն աստիճան է համարվում պաշտպանության այն աստիճանը, որի գերազանցման ժամանակ վտանգի դեպքում կամ աշխատանքի բնականոն կատարման պայմաններում հնարավոր է վերացնել օգտագործողի վնասվելու ռիսկը,

նախատեսված շահագործման տարբեր պայմանների համար, եթե առկա են նույն վտանգի տարբեր ուժգնության աստիճաններ, ապա անհատական պաշտպանության միջոցների մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել պաշտպանության դասերը՝ կախված վտանգի աստիճանից.

բ) ըստ անվտանգության ապահովման՝

անհատական պաշտպանության միջոցները պետք է մշակվեն եւ արտադրվեն այնպես, որպեսզի նախատեսված շահագործման պայմաններում աշխատելու ժամանակ դրանք չդառնան վտանգի կամ անսարքության պատճառ,

նյութերը, որոնցից պատրաստված են անհատական պաշտպանության միջոցները կամ հնարավոր լրացուցիչ պարագաները, սարքվածքները, չպետք է բացասական ազդեցություն ունենան օգտագործողի հիգիենայի եւ առողջության վրա,

անհատական պաշտպանության միջոցների այն մասերը, որոնք օգտագործման ժամանակ շփվում են կամ կարող են շփվել օգտագործողի հետ, չպետք է ունենան անհարթություններ, սուր եզրեր, սուր ծայրեր եւ այլն, որոնք կարող են առաջացնել վնասվածք կամ գրգռում,

անհատական պաշտպանության միջոցները հնարավորինս պետք է քիչ սահմանափակեն օգտագործողի դիրքը եւ շարժումները, ինչպես նաեւ զգայունության սրությունը եւ օգտագործողի մոտ չպետք է առաջացնեն շարժումներ, որոնք կարող են վնասել նրան կամ այլ անձանց.

գ) ըստ հարմարության եւ արդյունավետության՝

անհատական պաշտպանության միջոցները պետք է մշակվեն եւ արտադրվեն այնպես, որպեսզի համապատասխան դիրքում հարմարեցված լինեն օգտագործողի կազմվածքին, օգտագործման ընթացքում եւ արտաքին ազդեցությունների հետեւանքով մարմնի տեղաշարժի ժամանակ մնան նախատեսված դիրքում, որն ապահովվում է չափերի բավարար ընտրության կամ համապատասխան այլ միջոցների օգնությամբ, ինչպիսիք են կարգավորող եւ պահպանող համակարգերը,

անհատական պաշտպանության միջոցները պետք է լինեն թեթեւ՝ անկախ կառուցվածքի ամրությունից եւ արդյունավետությունից:

Լրացուցիչ հատուկ պահանջների (13-րդ կետ) հետ մեկտեղ՝ անհատական պաշտպանության միջոցները պետք է ապահովեն բոլոր հնարավոր վտանգներից արդյունավետ պաշտպանություն եւ ունենան նախատեսված շահագործման պայմանների ընթացքում առաջացող հնարավոր ազդեցությունների նկատմամբ բավարար ամրություն.

դ) ըստ համատեղելիության՝

տարբեր տիպի եւ կառուցվածքի անհատական պաշտպանության միջոցների մոդելները նախատեսված՝ մարմնի իրար մոտ գտնվող մասերը պաշտպանելու համար պետք է լինեն համատեղելի:

11. Շրջանառության մեջ մտած անհատական պաշտպանության միջոցների լրակազմում պետք է լինի արտադրողի կողմից հրատարակված՝ դրանց շահագործման մասին հրահանգը՝ հետեւյալ անհրաժեշտ տվյալներով՝

ա) արտադրողի եւ (կամ) նրա լիազոր ներկայացուցչի անվանումը, գտնվելու վայրը,

բ) պահման, օգտագործման, մաքրման, տեխնիկական սպասարկման, հսկման եւ ախտահանման վերաբերյալ ցուցումները:

Արտադրողի կողմից առաջարկվող մաքրման, տեխնիկական սպասարկման կամ ախտահանման միջոցները չպետք է վնասակար ազդեցություն ունենան անհատական պաշտպանության միջոցների կամ դրանց օգտագործողի վրա,

գ) տվյալ անհատական պաշտպանության միջոցներով ապահովվող պաշտպանության աստիճանի եւ դասերի ստուգման արդյունքում ստացված բնութագրերը,

դ) անհատական պաշտպանության միջոցների հետ օգտագործվող հանդերձանքի եւ պահեստամասերի համապատասխան տարբերակիչ հատկությունները,

ե) վտանգի տարբեր աստիճաններին համապատասխանող պաշտպանության դասերը եւ անհատական պաշտպանության միջոցների օգտագործման սահմանները,

զ) անհատական պաշտպանության միջոցների կամ դրանց որոշակի մասերի պիտանիության (ծառայության) ժամկետները,

է) անհատական պաշտպանության միջոցների փոխադրման համար նախատեսված փաթեթավորման ձեւերը,

ը) անվտանգության ապահովման համար անհրաժեշտ մակնշումները:

Շահագործման մասին հրահանգը պետք է լինի հասկանալի ու պարզ եւ պետք է հրատարակված լինի հայերեն:

12. Որոշակի տեսակների եւ տիպերի անհատական պաշտպանության միջոցներին ներկայացվող լրացուցիչ պահանջներն են՝

ա) կարգավորող համակարգով անհատական պաշտպանության միջոցները պետք է մշակվեն եւ արտադրվեն այնպես, որպեսզի նախատեսված շահագործման պայմաններում հարմարեցումից հետո բացառվի դրանց ինքնակամ վերակարգավորումը.

բ) անհատական պաշտպանության միջոցները, որոնք մարմնի պաշտպանվող մասերն առնում են "թաղանթի" մեջ, քրտնարտադրությունը սահմանափակելու համար պետք է ապահովեն բավարար օդափոխություն, կամ պետք է դրանց կազմում նախատեսված լինեն քրտինքը կլանող միջոցներ.

գ) դեմքի, աչքերի եւ շնչառական ուղիների պաշտպանության համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները պետք է հնարավորինս քիչ սահմանափակեն օգտագործողի տեսադաշտը:

Աչքերի պաշտպանության միջոցները պետք է ունենան օպտիկական չեզոքության աստիճան, որը պետք է համապատասխանեցվի ճշգրիտ գործողությունների տեսակներին եւ (կամ) աշխատանքի տեւողությանը:

Ակնոց կրող անձանց համար պետք է մշակվեն այնպիսի անհատական պաշտպանության միջոցներ, որոնք թույլ կտան միաժամանակ կրել ակնոցներ կամ հպումային տեսապակիներ.

դ) անհատական պաշտպանության միջոցները, որոնք ժամանակի ընթացքում մաշվածության (ֆիզիկական եւ (կամ) բարոյական) պատճառով կարող են կորցնել պաշտպանական հատկությունները եւ օգտագործման համար համարվել հնացած, յուրաքանչյուր անհատական պաշտպանության միջոցի կամ դրա բաղկացուցիչ մասերի, կամ փաթեթվածքի վրա պետք է ունենան արտադրողի կողմից նշված՝ դրանց արտադրման թվականը, պահման կամ ծառայության ժամկետները:

Եթե արտադրողը չի կարող սահմանել անհատական պաշտպանության միջոցների համար ճշգրիտ պիտանիության կամ ծառայության ժամկետ, ապա նա պետք է շահագործման մասին հրահանգում նշի այն բոլոր անհրաժեշտ պայմանները, որոնք, կախված մոդելի որակից, գնորդին կամ օգտագործողին հնարավորություն կտան պահման, օգտագործման, նորոգման եւ տեխնիկական սպասարկման փաստացի պայմաններից
ելնելով՝ գործնականում որոշելու դրանց պիտանիության ընդունելի ժամկետը:

Եթե անհատական պաշտպանության միջոցներն ունեն որակի արագ, զգալիորեն

փոփոխվելու հատկություն, ապա արտադրողը շահագործման մասին հրահանգում կամ յուրաքանչյուր անհատական պաշտպանության միջոցի վրա պետք է նշի դրա օգտագործումը սահմանափակող ժամկետները, մաքրման առավելագույն հաճախականության
եւ մաքրման եղանակների ու դրա համար օգտագործվող միջոցների վերաբերյալ ցուցումները:

Եթե սահմանված ժամկետների ավարտից հետո անհատական պաշտպանության միջոցները ենթակա են ստուգման կամ օգտագործումից հանման, ապա դրա վերաբերյալ շահագործման մասին հրահանգներում պետք է տրվեն համապատասխան ցուցումներ.

ե) եթե նախատեսված շահագործման պայմաններում գոյություն ունի շրջապատում գտնվող իրերի եւ առարկաների կողմից անհատական պաշտպանության միջոցների շարժական մանրակներով "բռնվելու", "կարթվելու", "ճանկվելու" վտանգ, որի հետեւանքով օգտագործողը կարող է վնասվել, ապա անհատական պաշտպանության միջոցների կարեւոր մասերի ամրության սահմանը պետք է հաշվարկել այնպես, որպեսզի դրա գերազանցումը բացառի հիմնական բաղկացուցիչ մասերի ջարդման վտանգը.

զ) պայթյունավտանգ միջավայրում օգտագործման համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները պետք է մշակվեն եւ պատրաստվեն այնպես, որպեսզի բացառվեն մեխանիկական, էլեկտրական եւ էլեկտրաստատիկ պայթյունավտանգ խառնուրդների հնարավոր բռնկում առաջացնող էներգաաղեղների եւ կայծերի առաջացման պատճառները.

է) անհատական պաշտպանության միջոցները, որոնք նախատեսված են արագ օգտագործման համար, պետք է մշակվեն եւ պատրաստվեն այնպես, որպեսզի դրանք տեղադրվեն եւ (կամ) հանվեն հնարավորինս կարճ ժամանակում:

Դրանք իրենց մեջ պետք է ընդգրկեն պահման եւ հանման համակարգեր, որոնք համապատասխան դիրքում թույլ կտան անհատական պաշտպանության միջոցներն արագ եւ
հեշտությամբ տեղադրել եւ հանել.

ը) արտակարգ պայմաններում օգտագործման համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցների շահագործման մասին հրահանգը պետք է պարունակի բացառապես իրազեկ անձնակազմի համար հատուկ նախատեսված տվյալներ անհատական պաշտպանության միջոցների պարամետրերի որոշման եւ օգտագործողին դրա տրամադրման
ապահովման մասին: Այն պետք է ընդգրկի նաեւ անհատական պաշտպանության միջոցների տեղադրման եւ գործունեության ճշգրտությունն ստուգելու համար հատուկ ցուցումներ:

Եթե անհատական պաշտպանության միջոցներն ունեն ազդանշանային համակարգեր, որոնք ակտիվանում են, երբ չի ապահովվում պաշտպանության նորմալ մակարդակ, ապա դրանք պետք է մշակվեն եւ տեղադրվեն այնպես, որպեսզի նախատեսված շահագործման պայմաններում այդ տագնապի ազդանշաններն ընկալվեն օգտագործողի կողմից.

թ) եթե անհատական պաշտպանության միջոցներն ունեն բաղկացուցիչ մասեր, որոնք օգտագործողը կարող է կարգավորել կամ փոխարինման նպատակով հանել, ապա դրանք պետք է մշակվեն եւ արտադրվեն այնպես, որպեսզի հնարավոր լինի առանց գործիքի կարգավորել, հավաքել եւ սպասարկել.

ժ) եթե անհատական պաշտպանության միջոցները սարքավորված են արտաքին սարքին միացվող կապող համակարգերով, ապա արտադրողի կողմից միացման տարրերը պետք է մշակվեն այնպես, որպեսզի դրանք հնարավոր լինի միացնել համապատասխան սարքին.

ժա) եթե անհատական պաշտպանության միջոցներն ընդգրկում են հեղուկի շրջանառության համակարգեր, ապա դրանք պետք է տեղադրվեն այնպես, որպեսզի օգտագործողի մարմնի դիրքից եւ շարժումներից անկախ նախատեսված շահագործման

պայմաններում չկատարվի հեղուկի թարմացում.

ժբ) անվտանգության ապահովմանը վերաբերող մեկ կամ մի քանի հատուկ մականշվածքներով կամ նշաններով անհատական պաշտպանության միջոցների մակնշման ենթակա տվյալները եւ հատուկ նշանները պետք է լինեն լրիվ, ճշգրիտ ու հասկանալի, որպեսզի բացառվեն թյուրիմացությունները: Եթե նման մականշվածքը պարունակում է բառեր եւ նախադասություններ, ապա մակնշումը պետք է կատարվի հայերեն:

Եթե անհատական պաշտպանության միջոցների չափերը թույլ չեն տալիս դրանց վրա լրիվ կամ մասամբ կատարել մակնշում, ապա այն պետք է նշվի փաթեթվածքի վրա եւ (կամ) արտադրողի՝ շահագործման մասին հրահանգում՝ ներառելով օգտագործողի կողմից դրանց կատարման անհրաժեշտության մասին տեղեկատվությունը.

ժգ) նախատեսված շահագործման պայմաններում օգտագործողի ներկայությունն ազդարարող հագուստը պետք է ունենա որոշակի տեղերում ամրացված մեկ կամ մի քանի լուսավորվող մանրակ: Անհրաժեշտ է համապատասխանաբար հաշվարկել լույսի հզորությունը, լուսաչափական եւ գունաչափական հատկանիշները.

ժդ) "բազմառիսկային" անհատական պաշտպանության միջոցները, որոնք նախատեսված են միաժամանակ առաջացող մի քանի տեսակի վտանգներից օգտագործողին պաշտպանելու համար, պետք է մշակվեն եւ արտադրվեն այնպես, որպեսզի բավարարեն սույն տեխնիկական կանոնակարգի 13-րդ կետով՝ ռիսկերից պաշտպանման նպատակով սահմանված պահանջները:

Որոշակի ռիսկից պաշտպանման նպատակով սահմանված լրացուցիչ պահանջները

13. Պաշտպանությունը մեխանիկական հարվածներից՝

ա) ընկնող եւ նետված իրերի ու խոչընդոտների հետ բախվելու հետեւանքով հարվածների վտանգից պաշտպանելու համար անհատական պաշտպանության միջոցները պետք է հարվածը թուլացնեն (վերցնեն իրենց վրա)՝ կանխելով մարմնի պաշտպանված մասի հնարավոր վնասվածքները, եւ պետք է հաշվարկված լինեն հարվածի այնպիսի ուժգնության համար, որպեսզի օգտագործման ժամանակ դրան դիմակայեն.

բ) պաշտպանությունն ընկնելուց՝

կախված գետնի որակից եւ վիճակից՝ սայթաքելու վտանգը բացառելու համար սայթաքումը կանխող կոշիկների ներբանները պետք է մշակվեն եւ արտադրվեն այնպես, որպեսզի ունենան հատուկ հարմարանքներ,

բարձրությունից ընկնելու կանխումն ապահովող եւ ընկնելու հետեւանքները թուլացնող անհատական պաշտպանության միջոցները պետք է ունենան մարմինը պաշտպանող սարքեր եւ կապող համակարգեր, որոնք ամրացվում են ամրակցման հուսալի կետերում: Դրանք պետք է մշակվեն եւ արտադրվեն այնպես, որպեսզի նախատեսված շահագործման պայմաններում ընկնելու բարձրությունը հնարավորինս կրճատվի, բացառվեն արգելքների հետ բախումը եւ արգելակման ուժից ալիքների առաջացումը, որոնց հետեւանքով հնարավոր են մարմնի վնասվածքներ, կոտրվածքներ եւ անհատական պաշտպանության միջոցների բաղկացուցիչ մասերի ինքնաբացում, որը կարող է հանգեցնել օգտագործողի վայր ընկնելուն: Անհատական պաշտպանության միջոցները պետք է հաշվարկվեն այնպես, որպեսզի ընկնելու ժամանակ արգելակումից հետո հնարավոր լինի օգտագործողին օգնել,

անհատական պաշտպանության միջոցների շահագործման մասին հրահանգը պետք է ընդգրկի ամրակցման հուսալի կետի անհրաժեշտ հատկանիշների ու ընկնելու ժամանակ ներքեւի ազատ տարածքի ապահովման, պահող սարքի օպտիմալ դիրքի եւ ամրակցման կետին կապող համակարգի ամրացման մասին անհրաժեշտ տվյալները.

գ) մեխանիկական թրթռման բացասական ազդեցությունը կանխելու համար

նախատեսված անհատական պաշտպանության միջոցները պետք է թուլացնեն մարմնի պաշտպանված մասերի վրա թրթռման ազդեցությունը: Արագացման փաստացի մեծությունը, որն օգտագործողն զգում է թրթռման հետեւանքով, չպետք է գերազանցի մարմնի պաշտպանված մասի համար սահմանված թույլատրելի նորմերը.

դ) այն անհատական պաշտպանության միջոցները, որոնք նախատեսված են ճնշումից մարմնի մասերը պաշտպանելու համար, պետք է ճնշումը մեղմացնեն այնքան, որպեսզի կանխեն լուրջ վնասվածքները եւ շարունակական բողոքների առաջացումը.

ե) մակերեսային մեխանիկական վնասվածքներից (քերծվածք, ծակոց, վերք, խայթոց) պաշտպանության համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցների
նյութերը եւ այլ բաղկացուցիչ մասերը պետք է ընտրվեն եւ մշակվեն այնպես, որպեսզի նախատեսված շահագործման պայմաններում բացառեն վնասվածքները (սույն կետի "ա, "բ", "գ" ենթակետեր).

զ) խեղդվողների փրկության համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները (փրկարարական անթեւ բաճկոններ, լողալու համար նախատեսված անթեւ բաճկոններ, փրկարարական միջոցների համակցություն) պետք է մշակվեն այնպես, որպեսզի մինչեւ օգնության հասնելն ապահովեն ուժասպառ կամ գիտակցությունը կորցրած օգտագործողի՝ ջրի երեսին մնալու հնարավորությունը՝ առանց վնաս հասցնելու նրա առողջությանը: Տվյալ անհատական պաշտպանության միջոցները կարող են մասամբ կամ ամբողջությամբ պատրաստված լինել լողացող նյութերից կամ փչվեն ավտոմատ կամ ձեռքով՝ գլխադիրով կափույրի միջոցով.

է) նախատեսված շահագործման պայմաններում՝

անհատական պաշտպանության միջոցները պետք է դիմակայեն ջրի վրա իջնելու ժամանակ առաջացող հարվածին, ինչպես նաեւ ջրի բնականոն ազդեցությանը՝ առանց գործառական որակի վատթարացման,

փչովի անհատական պաշտպանության միջոցները պետք է արագ եւ լիովին լցվեն օդով.

ը) հատուկ շահագործման պայմանների համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցների որոշ տիպեր, անհրաժեշտության դեպքում, պետք է ունենան հետեւյալ մեկ կամ մի քանի լրացուցիչ հարմարանքները՝

փչելու համար նախատեսված սարքավորանք՝ համաձայն սույն կետի "զ" ենթակետի եւ (կամ) օպտիկական կամ ակուստիկ ազդանշանով սարքավորանք,

պաշտպանիչ եւ փրկիչ հարմարանքով սարք, որի միջոցով կարելի է օգտագործողին հանել ջրից,

երկարատեւ շահագործման համար նախատեսված սարք, երբ առկա է օգտագործողի՝ հագուստով ջրի մեջ ընկնելու կամ խորասուզվելու վտանգ.

թ) անհատական պաշտպանության միջոցների լողունակությունն ապահովող օժանդակ միջոցները, որոնք նախատեսված շահագործման պայմաններում պետք է ապահովեն լողունակությունը եւ ջրի վրա մնալու հնարավորությունը, չպետք է բացասաբար ազդեն օգտագործողի շարժումների վրա. վտանգից խուսափելու կամ ուրիշներին օգնության հասնելու համար նրան պետք է տան ազատ գործելու եւ շարժվելու հնարավորություն:

14. Պաշտպանությունը աղմուկից՝

աղմուկի բացասական ազդեցությունը կանխելու համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները պետք է աղմուկի ազդեցությունը թուլացնեն այնքան, որպեսզի օգտագործողի կողմից ընկալվող աղմուկը չգերազանցի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2002 թվականի մարտի 6-ի "Աղմուկն աշխատատեղերում, բնակելի եւ հասարակական շենքերում եւ բնակելի կառուցապատման տարածքներում" N 2-III-11.3 սանիտարական նորմերով սահմանված թույլատրելի սահմանային մակարդակը:

Յուրաքանչյուր անհատական պաշտպանության միջոց պետք է ունենա աղմուկի մակարդակի նվազեցման աստիճանը ցույց տվող մականշվածք եւ հարմարության դասիչի ցուցանիշ: Եթե մականշվածքը հնարավոր չէ նշել անմիջապես անհատական պաշտպանության միջոցների վրա, ապա այն պետք է նշվի դրանց սպառողական փաթեթվածքի վրա:

15. Պաշտպանությունը ջերմության ազդեցությունից եւ (կամ) կրակից՝

ա) մարմինը կամ մարմնի մասերը ջերմության ազդեցությունից եւ (կամ) կրակից պաշտպանող անհատական պաշտպանության միջոցների ջերմային մեկուսացումն ու մեխանիկական ամրությունը պետք է համապատասխանաբար հաշվարկված լինեն նախատեսված շահագործման պայմանների համար.

բ) անհատական պաշտպանության միջոցների նյութերը եւ բաղկացուցիչ մասերը ջերմային ճառագայթումից պաշտպանվելու համար պետք է ունենան առաջացող ջերմային հոսքի թողունակության գործակից, ինչպես նաեւ բարձր հրակայունություն, որպեսզի կանխվի շահագործման նախատեսված պայմաններում ինքնաիրկիզման ցանկացած վտանգ:

Եթե արտաքին մանրակները եւ բաղկացուցիչ մասերն ունեն ջերմությունն անդրադարձնելու ունակություն, ապա այդ ունակությունը պետք է համապատասխանի ենթակարմիր ճառագայթման ընդգրկույթից առաջացած ջերմային հոսքի ուժգնությանը (ինտենսիվություն):

Անհատական պաշտպանության միջոցների նյութերը եւ բաղկացուցիչ մասերը, որոնք նախատեսված են տաք միջավայրում կարճաժամկետ օգտագործման համար, ինչպես նաեւ այն անհատական պաշտպանության միջոցները, որոնք ենթարկվում են տաք ցայտերի (օրինակ՝ հալված զանգվածի) ազդեցությանը, պետք է ունենան բարձր ջերմակլանող հատկություն, որպեսզի կուտակված ջերմության մեծ մասը դուրս գա միայն այն ժամանակ, երբ օգտագործողը հեռացել է վտանգավոր տեղից եւ հանել անհատական պաշտպանության միջոցը:

Անհատական պաշտպանության միջոցների նյութերը եւ բաղկացուցիչ մասերը, որոնք կարող են ենթարկվել դուրս նետված տաք զանգվածի ազդեցությանը, պետք է ունենան հարվածամեղմիչ հատկություն (13-րդ կետի "ա" ենթակետ):

Անհատական պաշտպանության միջոցների նյութերը եւ բաղկացուցիչ մասերը, որոնք օգտագործվում են հակահրդեհային սարքավորանքի արտադրման համար կամ երբեմն կարող են շփվել կրակի հետ, պետք է լինեն հրակայուն, որպեսզի դիմակայեն նախատեսված շահագործման պայմաններում առաջացող վտանգը: Դրանք կրակի ազդեցությունից չպետք է հալվեն եւ չպետք է նպաստեն կրակի տարածմանը.

գ) նախատեսված շահագործման պայմաններում օգտագործման համար պատրաստ, լրակազմ անհատական պաշտպանության միջոցներ՝

որոնց միջոցով օգտագործողին փոխանցվող ջերմության քանակությունը պետք է լինի այնքան, որպեսզի մարմնի պաշտպանված մասում կուտակված ջերմությունը չվտանգի նրա առողջությունը,

որոնք պետք է դիմակայեն հեղուկի եւ գոլորշու ներթափանցմանը եւ պաշտպանական թաղանթի հետ շփման ժամանակ չպետք է առաջացնեն բռնկում:

Եթե անհատական պաշտպանության միջոցներն ունեն սառեցնող հարմարանքներ, որոնք հեղուկի գոլորշիացման կամ կարծր նյութերի ցնդման հետեւանքով ջերմության կլանման հնարավորություն են տալիս, ապա դրանք պետք է կառուցված լինեն այնպես, որպեսզի դուրս մղվեն ցնդող նյութերը:

Անհատական պաշտպանության միջոցների կառուցվածքի մեջ մտնող շնչառական հարմարանքները նախատեսված շահագործման պայմաններում պետք է լինեն հուսալի եւ գործեն անխափան:

Տաք միջավայրում ոչ երկարատեւ օգտագործման համար նախատեսված յուրաքանչյուր անհատական պաշտպանության միջոցի մոդելի շահագործման մասին հրահանգում արտադրողը պետք է նշի այն բոլոր տվյալները, որոնց շնորհիվ կարելի

է որոշել սարքավորանքի միջոցով օգտագործողին փոխանցվող ջերմության թույլատրելի ազդեցության տեւողությունը։

16. Օգտագործողի մարմինը կամ մարմնի մասերը ցրտից պաշտպանող անհատական պաշտպանության միջոցների ջերմամեկուսացումը եւ մեխանիկական ամրությունը պետք է համապատասխանեն նախատեսված շահագործման պայմաններին՝

ա) ցրտից պաշտպանող անհատական պաշտպանության միջոցների նյութերի եւ բաղկացուցիչ մասերի տարբերակիչ առանձնահատկությունը, որը համարվում է համապատասխան հնարավոր ցածր ջերմային գործակիցը։

Ցածր ջերմաստիճանում օգտագործվող անհատական պաշտպանության միջոցների առաձգական հատկությամբ օժտված նյութերը եւ բաղկացուցիչ մասերը պետք է պահպանեն առաձգականության այն աստիճանը, որն անհրաժեշտ է մարմնի համապատասխան շարժմանը եւ դիրքին։

Սառը հոսանքից պաշտպանող անհատական պաշտպանության միջոցների նյութերը եւ բաղկացուցիչ մասերը պետք է նաեւ թուլացնեն մեխանիկական հարվածները (13-րդ կետի "ա" ենթակետ).

բ) անհատական պաշտպանության լրակազմ միջոցների օգտագործման ընթացքում՝

մարմնի պաշտպանված մասի (ներառյալ մատները եւ մատների ծայրերը) վրա ցրտի ազդեցությունը չպետք է առաջացնի ցավ կամ վտանգի առողջությունը,

դրանք պետք է կայուն լինեն հեղուկների (օրինակ՝ անձրեւաջրերի) ներթափանցման նկատմամբ եւ պաշտպանիչ սառը պատյանի հետ շփման ժամանակ չպետք է առաջացնեն վնասվածքներ։

17. Օգտագործողի մարմնի կամ մարմնի մասերի՝ էլեկտրական հոսանքից պաշտպանությունն ապահովող անհատական պաշտպանության միջոցների մեկուսացման աստիճանը պետք է համապատասխանի հոսանքի լարման այն ցուցանիշին, որի ազդեցության տակ՝ կանխատեսելի իրավիճակներում կարող է գտնվել օգտագործողը։

Անհատական պաշտպանության միջոցների նյութերը եւ բաղկացուցիչ մասերը պետք է ընտրվեն կամ մշակվեն ու տեղադրվեն այնպես, որպեսզի փորձարկումների ժամանակ չափվող հոսանքի կորուստը լինի թույլատրելի սահմանային եւ էտալոնային արժեքներից ցածր։

Այն անհատական պաշտպանության միջոցները, որոնք բացառապես նախատեսված են լարման տակ գտնվող էլեկտրասարքերի վրա աշխատելու համար, փաթեթվածքի վրա պետք է ունենան պաշտպանության դասի եւ (կամ) համապատասխան աշխատանքային լարման, ինչպես նաեւ անհատական պաշտպանության միջոցների սերիական համարի եւ պատրաստման թվականի վերաբերյալ մականշվածք։ Այդ անհատական պաշտպանության միջոցների պաշտպանիչ պատյանի արտաքին կողմի վրա պետք է տեղ հատկացված լինի շահագործման թվականի, փորձարկման պարբերականության կամ հսկման վերաբերյալ հետագա մակնշումներ կատարելու համար։

Արտադրողը շահագործման մասին հրահանգում պետք է նշի այդ անհատական պաշտպանության միջոցների շահագործման բացառիկ ձեւը, ինչպես նաեւ մեկուսացման տեսակը եւ հսկման պարբերականությունը, որին ծառայության ժամկետի ընթացքում պետք է ենթարկվեն անհատական պաշտպանության միջոցները։

18. Պաշտպանությունը ճառագայթումից՝

ա) ոչ իոնացնող ճառագայթում.

մշտական կամ հանկարծակի առաջացող ոչ իոնացնող ճառագայթումից աչքերը պաշտպանող անհատական պաշտպանության միջոցները պետք է կլանեն կամ արտացոլեն վնասակար ալիքների ընդգրկույթում ճառագայթման էներգիայի մեծ մասը՝ չվատացնելով տեսանելի սպեկտրի ընկալման ցայտունության անվտանգ փոխանցումը եւ գունային գործակիցը, եթե դա պահանջվում է շահագործման նախատեսված

պայմաններով:

Աչքերի պաշտպանության միջոցները պետք է մշակվեն եւ արտադրվեն այնպես, որպեսզի յուրաքանչյուր վնասակար ալիք ունենա սպեկտրային թողունակության գործակից, որի ժամանակ օգտագործողի աչքերի վրա զտիչով ներթափանցող ճառագայթի լուսավորման էներգիայի խտությունը լինի հնարավորինս փոքր եւ չգերազանցի ազդող բաժնեչափի թույլատրելի առավելագույն սահմանային մեծությունը:

Օպտիկական պաշտպանության միջոցները նախատեսված շահագործման պայմաններում ճառագայթման ազդեցությունից չպետք է վնասվեն կամ կորցնեն իրենց հատկանիշները: Շրջանառության մեջ մտած յուրաքանչյուր անհատական պաշտպանության միջոցի վրա պետք է մակնշված լինի պաշտպանության աստիճանի համարը, որը համապատասխանում է
բաշխման կորի թողունակության գործակցին:

Անհատական պաշտպանության միջոցները պետք է դասվեն ըստ իրենց պաշտպանության աստիճանի համարների աճման հերթականության: Անհատական պաշտպանության միջոցների շահագործման մասին հրահանգներում կամ հատուկ հրատարակություններում արտադրողը պետք է սահմանի թողունակության կորերը, որոնց օգնությամբ կարելի է ընտրել համապատասխան անհատական պաշտպանության միջոցը՝ հաշվի առնելով փաստացի շահագործման պայմանները՝ հեռավորությունը ճառագայթման աղբյուրից եւ ճառագայթիչների սպեկտրային բաշխումն այդ տարածության վրա, ինչպես նաեւ յուրաքանչյուր միջոցի պաշտպանության աստիճանի համարը.

բ) իոնացնող ճառագայթում.

արտաքին ճառագայթաակտիվ աղտոտվածությունից պաշտպանող անհատական պաշտպանության միջոցների նյութերը եւ բաղկացուցիչ մասերը պետք է ընտրվեն, մշակվեն եւ տեղադրվեն այնպես, որպեսզի նախատեսված շահագործման պայմաններում բացառեն ճառագայթաակտիվ նյութերի ներթափանցումը եւ օգտագործողի մարմինը կամ նրա մարմնի մասերը պաշտպանեն ճառագայթաակտիվ փոշուց, հեղուկներից կամ խառնուրդներից:

Հաշվի առնելով ճառագայթաակտիվ նյութի տեսակը եւ վիճակը՝ անհրաժեշտ անթափանցելիության կարելի է հասնել պաշտպանիչ թաղանթների եւ (կամ) ցանկացած այլ օդափոխիչ համակարգերի միջոցով, որոնք կանխում են ճառագայթաակտիվ աղտոտող նյութերի ներթափանցումը:

Նախատեսված շահագործման ժամկետի ընթացքում անհատական պաշտպանության միջոցների նկատմամբ իրականացվող վարակազերծման միջոցառումները չպետք է ազդեն անհատական պաշտպանության միջոցների այս տեսակների հնարավոր կրկնակի օգտագործման վրա.

գ) արտաքին ճառագայթումից սահմանափակ պաշտպանության անհատական պաշտպանության միջոցները, որոնք պետք է լիովին պաշտպանեն արտաքին ճառագայթումից կամ բավարար չափով թուլացնեն այն, պետք է մշակվեն միայն էլեկտրոնային ճառագայթների (բետա ճառագայթներ) համեմատաբար սահմանափակ էներգիա ունեցող (x-գամմա ճառագայթում) լուսային ճառագայթման համար:

Այդ տեսակի անհատական պաշտպանության միջոցների նյութերը եւ բաղկացուցիչ մասերը պետք է ընտրվեն, մշակվեն եւ տեղադրվեն այնպես, որպեսզի ապահովեն օգտագործողի առավելագույն պաշտպանվածությունը նախատեսված շահագործման պայմաններում: Օգտագործողի մարմնի դիրքը եւ (կամ) նրա տեղաշարժի սահմանափակումը չպետք է ավելացնեն ճառագայթման տեւողությունը: Տվյալ նպատակի համար նախատեսված շահագործման պայմանների համաձայն անհատական պաշտպանության
միջոցները պետք է ունենան նյութերի տեսակի եւ դրանց հաստության մասին մականշվածք:

19. Պաշտպանությունը վտանգավոր եւ վարակված նյութերից՝

ա) շնչառական օրգանների պաշտպանության համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները մթնոլորտի օդի աղտոտվածության կամ օդի մեջ թթվածնի պակասի պայմաններում պետք է օգտագործողին ապահովեն շնչելու համար պիտանի օդով:

Անհատական պաշտպանության միջոցների նյութերը եւ բաղկացուցիչ մասերը պետք է ընտրվեն, մշակվեն եւ տեղադրվեն այնպես, որպեսզի դրանք նախատեսված շահագործման պայմաններում ապահովեն օգտագործողի շնչառական ֆունկցիան եւ հիգիենան:

Դիմակի թափանցելիության աստիճանը, շնչելու ժամանակ օդի ճնշման նվազումը, ինչպես նաեւ զտվող օդի մաքրման աստիճանը պետք է հաշվարկված լինեն այնպես, որպեսզի աղտոտված միջավայրից օգտագործողի առողջության եւ հիգիենայի համար վնասակար աղտոտված նյութերի ներթափանցումը հասցվի նվազագույնի:

Նույնականացման նպատակով անհատական պաշտպանության միջոցների յուրաքանչյուր տիպ պետք է ունենա տեխնիկական տվյալների վերաբերյալ մականշվածք, որը համապատասխան որակավորում ունեցող օգտագործողին շահագործման
մասին հրահանգի հետ միասին հնարավորություն կտա ճիշտ օգտվելու անհատական պաշտպանության միջոցներից:

Զտիչ սարքերի համար շահագործման մասին հրահանգում եւ (կամ) փաթեթվածքի վրա արտադրողը պետք է նշի տեղադրված նոր զտիչի պահման ժամկետի սահմանափակման
մասին տեղեկատվություն.

բ) մաշկի եւ աչքերի այն անհատական պաշտպանության միջոցները, որոնք կանխում են մարմնի կամ նրա մասերի մակերեսային շփումը վտանգավոր կամ վարակիչ նյութերի հետ, նախատեսված շահագործման պայմաններում պետք է բացառեն նման նյութերի ներթափանցումը պաշտպանիչ թաղանթի միջով:

Անհատական պաշտպանության միջոցների նյութերը եւ բաղկացուցիչ մասերը պետք է ընտրվեն կամ մշակվեն եւ տեղադրվեն այնպես, որպեսզի ապահովեն լիարժեք անթափանցելիություն, որն անհրաժեշտության դեպքում հնարավորություն կտա անհատական պաշտպանության միջոցների է՛լ ավելի երկարատեւ օգտագործում օրվա ընթացքում կամ կապահովի այնպիսի անթափանցելիություն, որը կսահմանափակի օգտագործման տեւողությունը:

Եթե տարբեր վտանգավոր եւ վարակիչ նյութերը, իրենց հատկությունների կամ անհատական պաշտպանության միջոցների նախատեսված շահագործման պայմանների շնորհիվ ունեն բարձր թափանցելիություն, որը պայմանավորում է համապատասխան պաշտպանության ժամկետի սահմանափակումը, ապա այդ անհատական պաշտպանության միջոցները պետք է ենթարկվեն ստանդարտ փորձարկումների, որոնց արդյունքների հիման վրա պետք է դասակարգվեն դրանք: Այդ անհատական պաշտպանության միջոցները պետք է ունենան անհատական պաշտպանության միջոցի անվանումը կամ փորձարկման ժամանակ օգտագործվող նյութի կոդը, ինչպես նաեւ սովորական պաշտպանության տեւողությունը պարունակող մականշվածք: Արտադրողն անհրաժեշտության դեպքում շահագործման մասին հրահանգում պետք է սահմանի նախատեսված տարբեր շահագործման
պայմաններում փորձարկման եւ անհատական պաշտպանության միջոցների օգտագործման առավելագույն թույլատրելի ժամկետի որոշման համար նպատակահարմար բոլոր տվյալները:

20. Նախատեսված շահագործման պայմաններում ջրասուզակների պաշտպանական շնչառական սարքերը, հաշվի առնելով սուզման առավելագույն խորությունը, պետք է օգտագործողին մատակարարեն շնչառական խառնուրդ:

Նախատեսված շահագործման պայմաններում, անհրաժեշտության դեպքում, սարքավորումը պետք է ունենա հետեւյալ բաղկացուցիչ մասերը՝

ա) ջրասուզակի հագուստ, որը ջրի խորքում գտնվող օգտագործողին պաշտպանում է ճնշումից (13-րդ կետի "դ" ենթակետ) եւ (կամ) ցրտից (16-րդ կետ),

բ) ազդարարող սարք, որի շնորհիվ օգտագործողը ժամանակին զգուշացվում է շնչառական խառնուրդի հետագա մատակարարման ընդհատման մասին (12-րդ կետի "ը" ենթակետ),

գ) փրկիչ լրակազմ, որի շնորհիվ օգտագործողը կարող է դուրս գալ ջրի մակերես (13-րդ կետի "թ" ենթակետ):

Անհատական պաշտպանության միջոցների մակնշմանը ներկայացվող պահանջները

21. Անհատական պաշտպանության միջոցների մակնշումը պետք է պարունակի դրանք բնութագրող հիմնական տեղեկություններ, ինչպես նաեւ պաշտպանական հատկությունների եւ խնամքի եղանակի մասին տեղեկություններ:

22. Հիմնական տեղեկություններում պետք է ընդգրկվեն՝

ա) արտադրող կազմակերպության անվանումը, ապրանքային նշանը (առկայության դեպքում), գտնվելու վայրը,

բ) չափը,

գ) տիպը (մոդելը),

դ) արտադրման թվականը,

ե) անվտանգության ապահովման վերաբերյալ ցուցումները եւ նշանները,

զ) նորմատիվ փաստաթղթի նշագիրը:

23. Անհատական պաշտպանության միջոցների պաշտպանական հատկությունների եւ խնամքի մասին տեղեկությունները պետք է համապատասխանեն սույն տեխնիկական կանոնակարգի VII բաժնում ներկայացված համապատասխան ստանդարտներով սահմանված պահանջներին:

24. Արտադրական մեկ վտանգավոր կամ վնասակար գործոնից պաշտպանությունը նշող մակնշումն անհատական պաշտպանության միջոցների տարբեր տիպերի համար պետք է լինի նույնը: Օրինակ՝ ձեռնոցների, հագուստի, կոշիկի եւ այլնի համար պետք է կիրառվի թթուներից պաշտպանությունը նշող միեւնույն մակնշումը:

25. Պահման եւ (կամ) շահագործման ընթացքում պաշտպանական հատկությունները կորցնող անհատական պաշտպանության միջոցների մականշվածքում պետք է նշվեն պիտանիության եւ (կամ) ծառայության ժամկետները: Մականշվածքում ընդգրկվում են արտադրողի երաշխիքները, եթե դրանք սահմանված են սույն տեխնիկական կանոնակարգի VII բաժնում ներկայացված ստանդարտներով՝ բացառությամբ մանածագործական նյութերից պատրաստված պաշտպանական հագուստի եւ ձեռքերի պաշտպանության միջոցների:

26. Անհատական պաշտպանության միջոցների, բացի դեմքի եւ աչքերի պաշտպանության միջոցներից, խնամքի եղանակների վերաբերյալ մականշվածքը պետք է համապատասխանի սույն տեխնիկական կանոնակարգի "Անհատական պաշտպանության միջոցներին ներկայացվող պահանջները" ենթաբաժնում ներկայացված մակնշման համապատասխան ցուցումներին եւ VII բաժնում ներկայացված համապատասխան ստանդարտներով սահմանված պահանջներին:

27. Մակնշումը կատարվում է անհատական պաշտպանության միջոցների նվազագույն մաշման ենթակա եւ լավ նկատելի մասում:

Մականշվածքը պետք է լինի կայուն:

Եթե հնարավոր չէ մակնշումը կատարել անմիջապես արտադրատեսակի վրա, ապա

թույլատրվում է այն նշել պիտակի, ներդիրի վրա եւ (կամ) շահագործման մասին հրահանգներում:

28. Մանածագործական նյութերից պատրաստված պաշտպանական հագուստի խնամքի եղանակների վերաբերյալ մականշվածքն իրականացվում է սույն տեխնիկական կանոնակարգի VII բաժնում ներկայացված մակնշման ստանդարտներով սահմանված պահանջներին համապատասխան:

Խնամքի եղանակը բնութագրող նշանները պետք է գործվեն կամ տպվեն պիտակների վրա, որոնք կարվում են պաշտպանական հագուստին կամ նշվում են անմիջապես արտադրատեսակի վրա: Նշանը պետք է երեւա արտադրատեսակի ամբողջ ծառայության ժամկետի ընթացքում:

Թույլատրվում է սույն տեխնիկական կանոնակարգի VII բաժնում ներկայացված ստանդարտներով սահմանել նաեւ պաշտպանական հագուստը լվանալու վերաբերյալ համապատասխան ցուցումներ:

## IV. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ

29. Սույն տեխնիկական կանոնակարգի 1-ին կետով սահմանված անհատական պաշտպանության միջոցները, կախված ռիսկի աստիճանից եւ դրանց կառուցվածքից, դասակարգվում են հետեւյալ երեք կատեգորիաների՝

ա) I կատեգորիային (պարզ կառուցվածք) դասվում են այն անհատական պաշտպանության միջոցները, որոնք օգտագործողն ինքը կարող է գնահատել պաշտպանության ռիսկի աստիճանը եւ նվազագույն արդյունավետությունը:

I կատեգորիային պատկանում են այն անհատական պաշտպանության միջոցները, որոնք նախատեսված են օգտագործողին պաշտպանելու՝

արտաքին մեխանիկական վնասվածքներից,

հակադարձ ազդեցությամբ թույլ ազդող մաքրող միջոցներից,

տաք մանրակների (որոնց ջերմաստիճանը չի գերազանցում 50 oC-ը) հետ շփվելու ժամանակ առաջացող վտանգից,

թույլ հարվածներից, տատանումներից եւ թրթռոցից, որոնք չեն ազդում կենսականորեն կարեւոր օրգանների վրա, եւ որոնց ազդեցությունը չի առաջացնում անբուժելի վնասվածքներ,

արեւի լույսից (արեւային ակնոցներ).

բ) II կատեգորիային (սովորական կառուցվածք) դասվում են այն անհատական պաշտպանության միջոցները, որոնք չեն պատկանում I կամ III կատեգորիային.

գ) III կատեգորիային (բարդ կառուցվածք) դասվում են այն անհատական պաշտպանության միջոցները, որոնք նախատեսված են պաշտպանելու մահացու վտանգից կամ առողջության համար լուրջ, անուղղելի վնասից, երբ օգտագործողը չի կարող ժամանակին նկատել վտանգի անմիջական ազդեցությունը: Այս կատեգորիան ներառում է՝

զտիչով շնչադիմակներ՝ կարծր եւ հեղուկ աերոզոլներից կամ գրգռող, վտանգավոր, թունավոր կամ ճառագայթաակտիվ գազերից պաշտպանելու համար,

շնչադիմակներ, որոնք ապահովում են մթնոլորտից լիարժեք մեկուսացումը՝ ներառյալ ջրասուզման համար կիրառվողները,

անհատական պաշտպանության միջոցներ, որոնք ապահովում են միայն ժամանակավոր պաշտպանություն՝ քիմիական ազդեցությունից կամ իոնացնող ճառագայթումից,

անհատական պաշտպանության միջոցներ կամ դրանց պարագաներ, որոնք նախատեսված
